



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՆՈՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նորաշեն համայնք,

N 180  
26/12/2016թ.

**ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ  
ՄԱՐԶՊԵՏ  
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ա. Նալբանդյան Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Նորաշեն համայնքի ավագանու թիվ 27 որոշումը՝ կից հավելվածով, համայնքի ավագանու թիվ 28-Ա որոշումը, համայնքի ավագանու թիվ 29-Ն որոշումը՝ կից Նորաշեն համայնքի 2017-2021 թ.թ. զարգացման ծրագրով:

Առդիր՝ 30 թերթ:


26.12.2016

X 

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

Կադր.՝



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ  
ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» «դեկտեմբերի» 2016 թվականի թիվ 27

**«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014թ. նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նորաշեն համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 20-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների՝ սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Նորաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ

	Կողմ	Դեմ	Չեռնալահ
Բաղդասարյան Արայիկ	<i>[Signature]</i>		
Բաղդասարյան Իշխան	<i>[Signature]</i>		
Բաղդասարյան Վալերյա	<i>[Signature]</i>		
Էլոյան Արմինե	<i>[Signature]</i>		
Մարտիրոսյան Ռաֆիկ	<i>[Signature]</i>		
Մկրտչյան Մերուժան	<i>[Signature]</i>		
Ստեփանյան Վահան	<i>[Signature]</i>		





Հավելված

ՀՀ Լոռու մարզի Նորաշեն համայնքի ավագանու  
2016 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 27 որոշման

1. Հակոբյան	Աննա	Գարեգինի	10.0 հազար դրամ
2. Խանոյան	Լուսինե	Սամվելի	10.0 հազար դրամ
3. Բաղդասարյան	Լուսիկ	Ստեփանի	10.0 հազար դրամ
4. Հակոբյան	Նաիրա	Գրիգորի	10.0 հազար դրամ
5. Գևորգյան	Արևիկ	Սարգսի	10.0 հազար դրամ
6. Ալեքսանյան	Անուշ	Գևորգի	10.0 հազար դրամ
7. Ալեքսանյան	Ալմարա	Սաղաթելի	10.0 հազար դրամ
8. Գասպարյան	Շուշան	Սամվելի	10.0 հազար դրամ
9. Սահինյան	Տաթևիկ	Սարգսի	10.0 հազար դրամ
10. Գրիգորյան	Անի	Վրեժի	10.0 հազար դրամ
11. Բարոյան	Իվետա	Գարիկի	10.0 հազար դրամ
12. Սուքիասյան	Սյուզաննա	Սամվելի	10.0 հազար դրամ
13. Ավդալյան	Օլյա	Խաչատուրի	10.0 հազար դրամ
14. Անտոնյան	Կարինե	Փայլակի	10.0 հազար դրամ
15. Քոչարյան	Անի	Գագիկի	10.0 հազար դրամ
16. Քոչարյան	Անուշ	Սամվելի	10.0 հազար դրամ
17. Բարոյան	Ժաննա	Գարիկի	10.0 հազար դրամ
18. Անախասյան	Քրիստինե	Արթուրի	10.0 հազար դրամ
19. Խաչատրյան	Աշոտ	Կառլենի	10.0 հազար դրամ
20. Բաղդասարյան	Հայկ	Մասիսի	10.0 հազար դրամ
21. Բաղդասարյան	Պետրոս	Ռաֆիկի	10.0 հազար դրամ
22. Մարտիրոսյան	Ահարոն	Արթուրի	10.0 հազար դրամ
23. Ալեքսանյան	Արմեն	Գևորգի	10.0 հազար դրամ
24. Գևորգյան	Ռոբերտ	Սամվելի	10.0 հազար դրամ
25. Սուքիասյան	Պարույր	Սամվելի	10.0 հազար դրամ
26. Հովհաննիսյան	Ալեքսան	Մկրտչի	10.0 հազար դրամ
27. Մարտիրոսյան	Ալյոնա	Պետրոսի	10.0 հազար դրամ
28. Էլոյան	Բեդդիեմ	Համբարի	10.0 հազար դրամ
29. Էլոյան	Համբար	Արշալույսի	10.0 հազար դրամ
30. Մարտիրոսյան	Վերգինե	Ալեքսանի	10.0 հազար դրամ
31. Սարգսյան	Հակոբ	Բեգլարի	10.0 հազար դրամ
32. Մարտիրոսյան	Ատլաս	Վովայի	10.0 հազար դրամ
33. Սուքիասյան	Գայանե	Սեմյոնի	10.0 հազար դրամ
34. Բաղդասարյան	Աստղիկ	Ստեփանի	10.0 հազար դրամ
35. Ասլանյան	Մանյա	Սեդրակի	10.0 հազար դրամ
36. Համբարյան	Վարսիկ	Սուրբաթի	10.0 հազար դրամ
37. Սուքիասյան	Արմենուհի	Վոլադյայի	10.0 հազար դրամ
38. Բաղդասարյան	Անուշ	Անդրանիկի	10.0 հազար դրամ
39. Մկրտչյան	Հրանուշ	Մկրտչի	10.0 հազար դրամ
40. Սուքիասյան	Թամարա	Արմենակի	10.0 հազար դրամ
41. Սուքիասյան	Գոհար	Միշայի	10.0 հազար դրամ
42. Սուքիասյան	Բեհե	Արմենակի	10.0 հազար դրամ




43. Բաղդասարյան	Յուրո	Սարգսի	10.0 հազար դրամ
44. Մկրտչյան	Ռոզա	Կարապետի	10.0 հազար դրամ
45. Մկրտչյան	Զոհրաբ	Ալեքսանի	10.0 հազար դրամ
46. Բաղդասարյան	Սուսաննա	Ռուբենի	30.0 հազար դրամ
47. Ստեփանյան	Քիշմիշ	Սեդրակի	10.0 հազար դրամ
48. Մարտիրոսյան	Գոհար	Խնկանուսի	10.0 հազար դրամ
49. Հունանյան	Մելքոն	Սամսոնի	10.0 հազար դրամ
50. Բաղդասարյան	Եսթեր	Սեդրակի	10.0 հազար դրամ
51. Մարտիրոսյան	Սանամ	Սեդրակի	10.0 հազար դրամ
52. Մանուկյան	Էդիկ	Հակոբի	10.0 հազար դրամ
53. Էլոյան	Թագուն	Սերգոյի	10.0 հազար դրամ
54. Բաղդասարյան	Վարդգես	Արշալույսի	10.0 հազար դրամ
55. Մկրտչյան	Անգին	Սարգսի	10.0 հազար դրամ
56. Բաղդասարյան	Հրաչիկ	Միսակի	10.0 հազար դրամ
57. Բաղդասարյան	Սաթենիկ	Շոթայի	10.0 հազար դրամ
58. Բաղդասարյան	Աշոտ	Բեգլարի	10.0 հազար դրամ
59. Բաղդասարյան	Բոգդան	Վանոյի	10.0 հազար դրամ
60. Էլոյան	Ծովինար	Մարգարի	10.0 հազար դրամ
61. Սուքիասյան	Սուրեն	Ախուրիկի	10.0 հազար դրամ
62. Էլոյան	Արարատ	Սամվելի	10.0 հազար դրամ
63. Էլոյան	Արմեն	Անուլի	20.0 հազար դրամ
64. Պողոսյան	Անահիտ	Գրիգորի	10.0 հազար դրամ
65. Բաղդասարյան	Ազատ	Գրիշայի	10.0 հազար դրամ
66. Բաղդասարյան	Պատվական	Գրիշայի	10.0 հազար դրամ
67. Դիրարյան	Քրիստինե	Լևոնի	10.0 հազար դրամ
68. Բաղդասարյան	Արտուշ	Եովարտի	10.0 հազար դրամ
69. Գրիգորյան	Ելենա	Խաչատուրի	10.0 հազար դրամ
70. Մկրտչյան	Անահիտ	Մեսրոպի	10.0 հազար դրամ
71. Մկրտչյան	Գոհար	Սերյոժայի	20.0 հազար դրամ
72. Մկրտչյան	Հասմիկ	Նապոլեոնի	10.0 հազար դրամ
73. Ալեքսանյան	Քնարիկ	Տիգրանի	10.0 հազար դրամ

Աշխատակազմի քարտուղար՝ *Սևակ* Ա. Մկրտչյան







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Նորաշեն համայնք, գ.Նորաշեն  
հեռ.093475448

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» դեկտեմբերի 2016 թվականի N 28 -Ա

### ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-ին հոդվածով և «Հրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝ Նորաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Ստեղծել Նորաշեն համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) խորհուրդ հետևյալ կազմով՝

- |                 |          |    |  |
|-----------------|----------|----|--|
| 1. Մկրտչյան     | Ամայյա   | -- | աշխատակազմի քարտուղար, խորհրդի նախագահ,            |
| 2. Ալեքսանյան   | Արգինե   | -- | աշխատակազմի համայնքային ծառայող, խորհրդի քարտուղար |
| 3. Մարտիրոսյան  | Ռաֆիկ    | -- | ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)    |
| 4. Ստեփանյան    | Վահան    | -- | ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)    |
| 5. Մկրտչյան     | Արմինե   | -- | համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)   |
| 6. Սարգսյան     | Լիլիթ    | -- | համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)   |
| 7. Մկրտչյան     | Կարինե   | -- | համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)   |
| 8. Մկրտչյան     | Մարուսյա | -- | համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)   |
| 9. Ստեփանյան    | Սվետլանա | -- | համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)   |
| 10. Բաղդասարյան | Անժելա   | -- | համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)   |


2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2014թ. նոյեմբերի 21 -ի «Նորաշեն համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին» N 14 - Ա որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Բաղդասարյան Արայիկ	<i>[Signature]</i>		
Բաղդասարյան Իշխան	<i>[Signature]</i>		
Բաղդասարյան Վալերյա	<i>[Signature]</i>		
Էլոյան Արմինե	<i>[Signature]</i>		
Մարտիրոսյան Ռաֆիկ	<i>[Signature]</i>		
Մկրտչյան Մերուժան	<i>[Signature]</i>		
Ստեփանյան Վահան	<i>[Signature]</i>		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *[Signature]*

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Նորաշեն համայնք, գ.Նորաշեն  
հեռ.093475448

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» դեկտեմբերի 2016 թվականի N 29 -Ն

### ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝

Նորաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Նորաշեն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:  
(Տես ծրագիր 2017-2021 թ.թ.)
2. Ուժը կորցրած ճանաչել Նորաշեն համայնքի ավագանու «<30>> նոյեմբերի 2012 թվականի «Նորաշեն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրի հաստատելու մասին» N 12-Ն որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Բաղդասարյան Արայիկ	<i>[Signature]</i>		
Բաղդասարյան Իշխան	<i>[Signature]</i>		
Բաղդասարյան Վալերյա	<i>[Signature]</i>		
Էլոյան Արմինե	<i>[Signature]</i>		
Մարտիրոսյան Ռաֆիկ	<i>[Signature]</i>		
Մկրտչյան Մերուժան	<i>[Signature]</i>		
Ստեփանյան Վահան	<i>[Signature]</i>		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *[Signature]* Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կ.Տ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԼՈՒՈՒ ՄԱՐԶ**

**ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

**Գ. ՆՈՐԱՇԵՆ**

**2016թ.**



## Բովանդակություն

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն -----
- 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն -----
- 2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը -----
- 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը -----
- 2.4. Համայնքի ֆինանսականին իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները -----
- 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ -----
- 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈԻԹՀՍ) վերլուծություն -----
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում ----
- 3.1. Համայնքի զարգացման տեսլական -----
- 3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ -----
4. ՀՀԶԾ ֆինանսավորում -----
5. ՀՀԶԾ մոնիթորինգ -----



## 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Սիրով ողջունում եմ Նորաշեն համայնքի ազգաբնակչությանը և բոլոր նրանց ուլքեր հետաքրքրված են Նորաշենի համայնքի անցուդարձով, կատարվող ծրագրերով, այս հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացումով, որոնք վեր են հանվել բազմաթիվ քննարկումների ընթացքում:

Հուսով եմ, որ սատար կկանգնեք, որպեսզի կարողանանք իրականացնել մեր առջև դրված խնդիրները, համայնքը դարձնել բարեկեցիկ և զարգացած համայնք:

Կանխավ շնորհակալ եմ բոլոր այն գործարարներին, համայնքաբնակներին և շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին, որոնք կօգնեն համայնքի զարգացման ծրագրերի իրականացմանը, հասարակական կյանքի ակտիվացման գործընթացներին:

### **Գալիք հինգ տարում համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են**

- Բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը
- Համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը
- Հատուկ ուշադրություն դարձնել կրթությանը, մշակույթի զարգացմանը
- Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
- Բարելավել համայնքի ֆինանսական կարողությունը
- Նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը
- Նոր աշխատատեղերի ստեղծում

### ➤ **Համայնքում առկա հիմնախնդիրները**

- Բնակչության սոցիալապես անապահով վիճակ /50%-60%/
- Առկա գյուղատնտեսական տեխնիկայի և գործիքների մաշվածություն
- Փոքր հողակտորների և ոչ ճիշտ օգտագործման արդյունքում ուժասպառված հողերը
- Ռոտոման ջրի բացակայություն:
- Խմելու ջրի արտաքին և ներքին ցանցերի մաշվածության / նոր ջրագծի կառուցում/
- Արտատվարների ճանապարհների անմխիթար վիճակ, բացակայություն
- Աշխատատեղերի բացակայություն
- ԳԵՆ պլանի բացակայություն
- Մանկապարտեզի շենքի անգործություն /կապիտալ նորոգում/
- Ներհամայնքային ճանապարհներ և գիշերային լուսավորության կառուցում
- Աղբահանության բացակայություն
- Համայնքապետարանի կապիտալ նորոգում
- Կեղտաջրերի հեռացման համակարգի կառուցում

### ➤ **Լուծման ուղիները**

- Օրենքների փոփոխություններ
- Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներկրում
- Կոոպերատիվների ստեղծում և ընդլայնում
- Աշխատատեղերի ստեղծում
- Իրավագիտական ծառայությունների մատուցում
- Գովազդ
- Հանարային մասնակցություն
- Համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակվում է ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով և այլ օրենսդրական ակտերով:

Այն մշակվում է համայնքի ղեկավարի, աշխատակազմի, համայնքի ավագանու, համայնքի բնակչության, հանձնաժողովների և ՀԿ –ների կողմից արված առաջարկությունների և քննարկումների հիման վրա, որը հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ:

## 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Լոռու մարզի Նորաշեն գյուղը հիշատակվում է 19-րդ դարից: Համայնքը հիմնականում ձևավորվել է 20-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանից ներգաղթած բնակչությամբ: Գյուղը ավելի հին է, քան ենթադրվում է՝ վկայությունն է գյուղի ծայրամասում գտնվող կիսաքանդ եկեղեցին:

Նորաշենի համայնքը գտնվում է Տաշիր քաղաքից 11 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Մ3 մայրուղու հարևանությամբ, մարզկենտրոնից 65 կմ հեռավորության վրա: Համայնքի վարչական տարածքով են անցնում Նորաշեն գետը: Գյուղի ռելեֆը հարթավայրային է, կլիման բարեխառն է:



### Համայնքի հողատարածքը

	ՀՀ լոռու մարզի Նորաշենի համայնքի հիմնական հողային ռեսուրսները	հա
1.	Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը որից	1413.29
2.	Բնակավայրի հողեր	103.55
3.	Գյուղատնտեսական նշանակության հողեր	1155.22
4.	Անտառային հողեր	119.81
5.	Արդյունաբերության, ընդերք օգտագործման և այլ արտադրական հշանակության հողեր	20.15
6.	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	1.33
7.	Հատուկ պահպանվող տարածքների հողեր	7.90
8.	Ջրային հողեր	5.33



➤ 1.2. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի բնակչությունը կազմում է 1603 մարդ, որոնցից՝

Կանայք— 833

Տղամարդիկ—770

2. Բնակչության տարիքային կազմը՝

0-6 տարեկան 112

7-17 տարեկան 139

18-62 տարեկան 1120

63-ից բարձր 232

3. Բնակչության սոցիալական կազմը

Թոշակառուներ 234

Միակողմանի ծնողազուրկ երեխաներ 10

Հաշվանդամներ 72

Աշխատունակներ 1088

Սոցիալական նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ 71

Զոհվածների ընտանիքներ 2

**2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը**

*Նկարագրել համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակն, անդրադառնալով հետևյալ հարցերին.*

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն- 27046
- ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը - 34.1(%)
- Համայնքի տարածքում ծառայությունների բնագավառի ձեռնարկություններն են՝  
*Խանութներ-5 զբաղված են առևտրով*  
*Համայնքը համարվում է գյուղատնտեսական՝*  
*Դաշտավարություն*  
*Անասնապահություն*  
*Արտադրվող հիմնական գյուղատնտեսական մթերքներն են՝ ցորեն, կարտոֆիլ, հաճար,*  
*բանջարաբոստանային կուլտուրաներ, պտուղ*

անվանում	հեկտար	Արտադրանքի ցենտներ	Իրացման շուկա
Ցորեն	45	1020	ՀՀ շուկա
Հաճար	2	30	ՀՀ շուկա
Բանջ.բոստ. կուլտուրաներ	1.87	96.9	ՀՀ շուկա
Պտուղ	1.38	169.41	ՀՀ շուկա

Կարտոֆիլ	45	7660	ՀՀ շուկա
Կերեր /խոտ/	580	16800	ՀՀ շուկա

Անասնապահություն. Արտադրվող հիմնական մթերքն են՝ կաթ, միս, բուրդ

անվանում	ցենտներ	Իրացման շուկա
Կաթ	84000	ՀՀ շուկա
Միս	1500	ՀՀ շուկա
Բուրդ	15	ՀՀ շուկա

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց  
աշակերտների թիվը 116  
Աշխատողների թիվը 31  
Դպրոցը հիմնանորոգված է, սակայն մասնակի վերանորոգման կարիք ունի:  
Համայնքում գործում է նախակրթարան, հարմարեցված դպրոցի շենքում, որտեղ հաճախում են 25 երեխաներ :
- Համայնքում գործում է բուժ. կետ, համապատասխան շենքում:
- Ընտանեական նպաստի համակարգում ընդգրկված են 72 ընտանիքներ:
- գործազրկության մակարդակը 55%:  
**2.3 Համայնքում իրականացվող ծրագրեր**  
Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվող ծրագրերն անհայտ են:

## 2.4 Համայնքի ֆնանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

	ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	2016	2017	2018	2019	2020	2021
Ա.	ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	28796.3	28200.1	28113.3	28725.0	28965.0	29560.0
1.	Հողի հարկ	4675.4	4524.9	4510.0	4495.0	4490.0	4460.0
2.	Գույքահարկ	3550.6	3556.9	3565.0	3580.0	3595.0	4000.0
3.	Վարձավճար	800.0	900.0	920.0	930.0	950.0	970.0
4.	Տեղ. տուրք	80.0	80.0	80.0	80.0	80.0	80.0
5.	Այլ եկամուտներ	1852.0	1300.0	1200.0	1800.0	2000.0	2200.0
6.	Ընդամենը սեփ. եկամուտներ	10950.0	10361.8	10275.0	10885.0	11115.0	11710.0
7.	Դոտացիա	17838.3	17838.3	17838.3	17840.0	17850.0	17850.0
Բ.	ԾԱԽՍԵՐ	29293.5	29500.1	28900.0	29300.0	29800.0	30900.0
1.	Կառավ. ապարատ. ծախսեր	17488.5	16248.5	17500.0	18500.0	18700.0	19000.0
2.	Շրջակա միջավայր պաշտպ	2800.0	2200.0	2200.0	2300.0	2400.0	2500.0
3.	Տրանսպորտային կապ	2000.0	2000.0	2100.0	2200.0	2300.0	2400.0
4.	Բնակ. շինություն	2000.0	1600.0	1800.0	2000.0	2100.0	2200.0
5.	Հանգիստ, մշակույթ, կրոն	2945.0	1930.0	2000.0	2100.0	2200.0	2300.0
6.	Կրթություն	360.0	400.0	400.0	400.0	400.0	400.0
7.	Սոցիալական պաշտպան.	1000.0	1000.0	1200.0	1300.0	1300.0	1300.0
8.	Այլ խմբեր /պահուստային/	700.0	4121.6	1700.0	500.0	400.0	800.0



### 2.1.5. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ

Այս ենթաբաժնում մանրամասն պետք է նկարագրվեն համայնքի զարգացման հիմնական խոչընդոտներն ու դժվարությունները: Պետք է դիտարկվեն զարգացման առնվազն հետևյալ ուղղություններում առկա դժվարությունները.

1) գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման հիմնական խոչընդոտող գործոններն են ֆինանսների բացակայությունը, իրացման շուկայում արտադրանքի անմրցունակ լինելը, իրացման դժվարությունները, գիտելիքների պակասը:

2) համայնքի գույքի կառավարումը իրականացնելու խնդրի խոչընդոտող գործարար միջավայրի և ձեռնարկատիրության ցածր մակարդակը, ֆինանսների պակասը, բնակչության մոտ գիտելիքների պակասը, արտագնա աշխատանքը:

3) նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման խոչընդոտներից են՝ շենքի ձեռք բերման խնդիրը՝ համապատասխան ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով, ինչպես նաև համապատասխան գույքի ձեռք բերման ֆինանսական խնդիրները:

4) ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ, խնդրի խոչընդոտներից են համապատասխան մարզական կառույցների և գույքի բացակայությունը և դրանց ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

5) համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը բարելավելու համար խոչընդոտ է աշխատատեղերի պակասը, սեզոնային զբաղվածության արտադրամասերի բացակայությունը, սոցիալական օգնության ֆինանսների սակավությունը, լրացուցիչ եկամուտների ստացման բացակայությունը:

6) ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը երիտասարդության ներգրավմամբ, խնդրի խոչընդոտներից են համապատասխան մարզական կառույցների և գույքի ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

7) համայնքում բնակարանային շինարարության խթանման խոչընդոտ է համարվում ֆինանսական միջոցների բացակայությունը:

8) համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը, խնդրի խոչընդոտներից են աղբամանների, աղբահարթակների, աղբավայրի և աղբատար մեքենայի բացակայությունը, ֆինանսական միջոցների բացակայությունը:

9) համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը, այս բնագավառում՝ ներհամայնքային տրանսպորտի ներդրումը տնտեսապես ձեռնտու չէ, իսկ ճանապարհների և ենթակառուցվածքների պահպանման և շահագործման առումով կան որոշակի ֆինանսական դժվարություններ:

10) պետության պաշտպանության իրականացման աջակցումը, այս խնդրի լուծման համար կարևոր խոչընդոտ է հայրենասիրական, պետական մտածողության պակասը, գյուղաբնակների ամենօրյա զբաղվածությունը անասնապահության մեջ, տրանսպորտային միջոցների ոչ սարքին վիճակը:

11) աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը, խնդրի խոչընդոտներից են շենքերի և շինությունների ոչ սեյսմակայուն լինելը, պարզագույն թաքստոցների և

քաղաքացիների անահատական պաշտպանության միջոցների բացակայությունը, ազդանշանային սարքերի բացակայությունը:

12) գյուղատնտեսության զարգացման խթանումը, կարևոր խոչընդոտ է ոռոգման ջրագծի և ջրի բացակայությունը, գյուղատնտեսական տեղնիկայի բարձր% կազմող մաշվածությունը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների բացակայությունը, արոտներում ջրի, մակատեղերի, ծածկոցների և ճանապարհների բացակայությունը:

13) համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտ է գիտակցական մակարդակի ոչ բարվոք վիճակը:

14) համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում- այս խնդրի լուծման դժվարությունները կապված են սոցիալական վատ վիճակի և աշխատատեղերի բացակայության հետ:

15) համայնքում ծնելիության և բազմազավակության խթանման խոչընդոտներից են բնակչության սոցիալական վիճակը, աշխատատեղերի բացակայությունը, բազմանդամ ընտանիքների հանդեպ հոգածության ցածր մակարդակը, բնակչության մոտ կա մտահոգություն երեխաներին բարեկեցիկ կյանք ապահովելու հարցում:

16) համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը- այս խնդրի իրականացման խոչընդոտ է մասնագետների և սարքավորումների պակասը, սոցիալական խավերի ֆինանսական ցածր հնարավորությունները, առողջության պահպանման համալիր ծրագրի բացակայությունը:

17) համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանման դժվարությունները կապված են սոցիալական վիճակի և գիտակցական մակարդակի հետ:

18) համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը, կապված է սոցիալական վատ վիճակի և գիտելիքների անհրաժեշտ պաշարի բացակայության հետ :

19) բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով- այս խնդրի լուծման դժվարությունները կապված են իրազեկման, հայրենասիրական ոգու պրոպագանդման, արտերկրներում բնակվող մեր հայրենակիցների հետ մշտական կապի բացակայության, նրանց համայնքային կյանքին ծանոթացնելու և մասնակից դարձնելու խնդրի հետ , ինչպես նաև բարեգործությունների լայն լուսաբանման բացակայության հետ:

## **2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն**

### **Ուժեղ կողմերը**

1. Գյուղի աշխարհագրական դիրքը / միջպետական Մ3 մայրուղու մոտ գտնվելը/

2. Գազաֆիկացված է մոտ 100%-ով



3. Հիմնանորոգված միջնակարգ դպրոց

10. Կրթվածության բարձր մակարդակը

### **Թույլ կողմերը**

1. Աշխատատեղերի սակավությունը

2. Ոռոգման ջրի բացակայությունը

3. Փոքր հողակտորների առկայությունը

4. Արոտներում ճանապարհների, ջրաղբյուրների, կացարանների բացակայությունը

5. Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների բացակայություն

6. Խմելու ջրի ներքին և արտաքին ցանցերի անբավար վիճակը

7. Գյուղատնտեսական արտադրանքի ստացման բարձր ինքնաբերական և իրացման դժվարություններ

8. Աղբահանության բացակայություն

10. Կենտրոնացված կոյուղու բացակայություն

### **Հնարավորությունները**

1. Աշխատուժի առկայություն

2. Կոոպերատիվների ստեղծում

### **Սպառնալիքներ**

1. Երաշտ

2. Կարկուտ

3. Բնակչության աճի ցածր տեմպ

## **3 Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում**

### **3.1 Ի՞նչ տեսլական ունի համայնքը ապագա տարիների համար,**

Նորաշենի համայնքում գալիք տարիներին՝ ՀԶԾ իրականացման արդյունքում նախատեսվում է

1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում, որի արդյունքում համայնքում կգործեն ձեռնարկությունների մասնաճյուղեր՝ մասնավորապես գյուղ մթերքների վերամշակման արտադրամաս:

2. Գյուղատնտեսության բնագավառում նախատեսվում է զարկ տալ կոոպերատիվային շարժմանը, մեքենատրակտորային կենտրոնացված կայանի ստեղծում, ժամանակակից բարձր արտադրողական տեխնիկայի ձեռք բերում , մասնավորապես կոմբայն,վարի տրակտոր և այլ գյուղմեքենաներ և գործիքներ: Նախատեսվում է նաև արոտների ճանապարհներ կառուցում,արոտատեղերում մակատեղերի,կացարանների և ծածկոցների կառուցում:
3. Համայնքի զարգացման ընթացքը իրատեսական և նպատակային լինելու համար անհրաժեշտ ենք համարում բնակչության բնական և արհեստական աճը: Գործարար միջավայրի բարելավումը, աշխատատեղերի ստեղծումը, գյուղատնտեսության ինտենսիվացումը մեծ խթան կլինեն համայնքում ծնելիությանը և բազմազավակությանը, ինչպես նաև բնակչության ներհոսքին:Բազմազավակությանը և ծնելիությանը խթանելու համար նախատեսվում է նաև ֆինանսական օգնության իրականացում, նորաստեղծ ընտանիքներին անհատույց տնամերձ հողամասերի տրամադրում:
4. Նախատեսվում է համայնքում պարբերական և հաստատուն աղբահանության իրականացում: Դրա համար նախատեսվում է համայնքում կառուցել 20-ից 25 աղբահարթակներ, որոնցում կտեղադրվեն աղբամաններ: Նախատեսվում է նաև աղբատար մեքենայի ձեռք բերում և աղբի պարբերական հեռացում աղբամաններից :
5. Համայնքի ճանապարհների և ենթակառույցների մասով նախատեսվում է որոշ փողոցների ասֆալտապատում /1000-ից 2000քառմ/ , որոշ մասի շեֆենապատում, ինչպես նաև ջրհեռացման առուների վերականգնում և մաքրում:
6. Երիտասարդության ներգրավմամբ նախատեսվում է ակտիվ մշակույթային և մարզական միոցառումների կազմակերպում ,ժամանցի կենտրոնների ստեղծում, մարզական և մշակույթային խմբակների ստեղծում:
7. Համայնքի բյուջեի եկամուտների ավելացման համար նախատեսվում է համայնքային գույքը վարձակալությամբ տրամադելու աշխատանքներ,մասնավորապես համայնքային հողերի , շենքերի ու շինությունների,տեխնիկայի ,սարքավորումների վարձակալությամբ տրամադրելը: Նախատեսվում է նաև համայնքային սեփականության հողամասերի օտարում ` հասարակական և արտադրական կառույցների համար,ինչպես նաև առևտրի կետերի, հանգստյան գոտիների կառուցման համար:
8. Համայնքի բնակավայրի կառուցապատման, բարեկարգման և կանաչապատման մասով նախատեսվում է կանաչապատ տարածքների ավելացում` ծառատունկ, շենքերի և շինությունների վերանորոգման և արդիականացման աշխատանքներ,փողոցների մաքրման աշխատանքներ;
9. Համայնքում բնակարանային շինարարության խթանման բնագավառում նախատեսվում է երիտասարդ ընտանիքներին անհատույց տնամերձ հողամասերի տրամադրում, ցածր տոկոսներով երկարատև վարկերի տրամադրում , օժանդակություն փաստաթղթային, իրավական հարցերում և բարոյական աջակցություն:
10. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման բնագավառում նախատեսվում է սպորտային միջոցառումների , սպորտլանդիաների անցկացում,

սպորտային առանձին խմբակների ստեղծում, միջհամայնքային մրցումների անցկացում:

11. Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման համար նախատեսվում է բուժկետի շենքի վերանորոգում, սարքավորումներով և գույքով ապահովում, ծրագրային կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում և համայնքի բնակչության առողջության պարբերական ստուգման աշխատանքներ բարձր որակավորում ունեցող մասնագետների կողմից:
12. Նախադպրոցական դաստիարակության բնագավառում նախատեսվում է՝ մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխատանքներ, նոր գույքի և սարքավորումների ձեռք բերում , մանկապարտեզ հաճախող երեխաների թվի ավելացում և պայմանների բարելավում:
13. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում նախատեսում է՝ դասընթացների կազմակերպում, բնակչության իրազեկման ազդանշանային սարքավորումների տեղադրում, պարզագույն թաքստոցների կառուցում:
14. Պետական պաշտպանության աջակցման բնագավառում նախատեսվում է ռազմահայրենասիրական միջոցառումների իրականացում, բանակային կյանքին վերաբերվող հարցերի լուսաբանում, զինապարտների պարբերական հաշվառում և զինկոմիսարիատների հետ փոխհամագործակցություն:
15. Համայնքի սոցիալական պաշտպանության բնագավառում նախատեսվում է սոցիալական նպաստների տրամադրում, ֆինանսական օգնության տրամադրում <<Փարոս>> համակարգում չընդգրկված ,սական սոցիալապես ոչ բարվոք վիճակում գտնվող ընտանիքներին:Նախատեսվում է նաև բարեգործական կազմակերպությունների միջոցով որոշակի օժանդակություն /անասունների տեսքով,գույքի տեսքով և այլն/:
16. Հաշմանդամներին հասարակական կյանքին մասնակցության խթանման բնագավառում նախատեսվում է համագործակցություն համապատասխան կազմակերպությունների հետ, համանդամներին ընդգրկել զանազան հանձնաժողովների և խմբերի մեջ: Ստեղծել պայմաններ նրանց ազատ տեղաշարժի համար/ սայլուղիների կառուցում և այլն/:
17. Բարեգործության խթանման բնագավառում նախատեսվում է արտերկրներում բնակվող մեր հայրենակիցներին պարպերաբար տեղեկացում համայնքի հասարակական կյանքին ,խնդիրներին և լուծման ուղիներին: Լայնորեն լուսաբանել համայնքում կատարված ցանկացած բարեգործություն: Կազմակերպել մեծարման ցերեկույթներ, համագործակցում բարեգործական կազմակերպությունների հետ,ստեղծել բարեգործների անկյուն և լուսանկարների միջոցով լուսաբանել բարեգործների աշխատանքները և ստացված արդյունքները:

### **3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ**

1. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարման նպատակն է համայնքային բյուջեի ավելացումը, համայնքային գույքի պահպանումը ,իրականացվող ծրագիրը նպատակ ունի համայնքային գույքի՝ մշակույթի տան կապիտալ վերանորոգում, սան հանգույցի կառուցում և մշտական հոսող ջրով ապահովմանը :

2. Ակտիվ մշակութային և մարզական միջոցառումները միտված են երիտասարդության ակտիվացմանը- վերանորոգված խաղասենյակի առկայությունը կնպաստի գիտելիքների ավելացմանը , հայրենասիրության բարձրացմանը, առողջ ապրելակերպի ու համայնքաին մտածողության բարձրացմանը:

3. Համայնքի ճանապարհների պահպանման և շահագործման ծրագրերի արդյունքում կունենանք 800քառ.մետր ասֆալտապատ փողոց , 2000 քառ.մետր բարեկարգ շեքենապատված ճանապարհ, 1500մետր վերանորոգված ջրհեռացման առու, մաքուր և գրավիչ համայնք` բնակվողների և հյուրերի համար:

4. Աղետների ռիսկերի նվազեցման և Քաղ. Պաշտպանության միջոցառումների շնորհիվ կապահովվի բնակչության անվտանգությունը և բնականոն կյանքի գործունեությունը:

5. Գյուղատնտեսության բնագավառի ծրագրերը նպատակ ունեն գյուղմթերքների առատության, իրացման շուկայում մրցունակության բարձրացման, բնակչության սոցիալական և ֆինանսական վիճակի բարելավման, գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճ հնգամյակի ընթացքում 20-ից մինչև 50 տոկոս:

6. Համայնքի բնակավայրի կառուցապատման, բարեկարգման նպատակն է ունենալ փողոցային լուսավորության լապտերների ավելացում 20-ից 40 կետով , ժամանակակից ենթակառուցվածքներով և շինություններով մաքուր` աղբահարթակներով և աղբամաններով կահավորված համայնք, որտեղ աղբատար մեքենայով աղբը պարբերաբար հեռացվում է համայնքից::

#### **4. Համայնքի զարգացման ծրագրի ֆինանսավորումը**

Պարտադիր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է /ըստ անձնագրերի/

**1. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ** -իրականացվում է դռնոր կազմակերպության միջոցով` համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ և համայնքի ներդրումներով:

**3. ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ** -իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով

**4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ-ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԵՌՔ ԲԵՐՈՒՄ** -իրականացվում է ԱՍԻԱԿԱՆ բանկի և համայնքի կողմից 20% ներդրմամբ գոյացած ֆինանսական միջոցներով, ինչպես նաև համայնքի աշխատուժի ներդրմամբ:

**5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ-ԱՐՈՏՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ** - իրականացվում է ԿԱՐԻՏԱՍ-ի և համայնքի կողմից 10% ներդրմամբ գոյացած ֆինանսական միջոցներով, ինչպես նաև համայնքի աշխատուժի ներդրմամբ:

**6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՆՈՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ-ՈՐՈԳՄԱՆ ԶՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ**- իրականացվում է դռնոր կազմակերպության և համայնքի կողմից 7% ներդրմամբ գոյացած ֆինանսական միջոցներով, ինչպես նաև համայնքի աշխատուժի ներդրմամբ:



**8. ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ - իրականացվում է դոնոր կազմակերպության և համայնքի կողմից 7 ներդրմամբ գոյացած ֆինանսական միջոցներով, ինչպես նաև համայնքի աշխատուժի ներդրմամբ:**

**9. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ – իրականացվում է դոնոր կազմակերպության և համայնքի բյուջեի միջոցներով**

**10. ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ - իրականացվում է է համայնքի բյուջեի միջոցներով:**

**5. ՀՀԶԾ-ի մոնիթորինգը** - իրականացվում է հարցումների և փաստերի ուսումնասիրության հիման վրա, որով գնահատվում է զարգացման ծրագրերի անձնագրերով նախատեսված ցուցանիշների իրական լինելը, ծրագրի իրականացման արդյունավետությունը, բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունը: Հսկվում է ծրագրի իրականացման ընթացքը: Յուրաքանչյուր ծրագրի նկատմամբ իրականացված մոնիտորինգի ցուցանիշը նշված է մոնիթորինգի վերաբերյալ հավելվածում՝ ըստ տարիների և թիրախային արժեքների:

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՆՈՐԱՇՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Աղբահանություն և սանիտարական մաքրում						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի տարածքից աղբի լիարժեք հեռացում						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Աղբահանության իրականացումը համայնքում, %-ներով	0	10	50	100	100	100	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բնակիչների գիտելիքների ավելացում աղբահանության բնագավառում						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Աղբահանության բնագավառում մասնակցող տնային տնտեսությունների աճ	0	50	150	300	350	400
	2. Աղբահանության կազմակերպման կուլտուրայի ձևավորում բնակչության մոտ						
<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
Կուլտուրական աղբահանության մասնակցող բնակիչների աճ	0	200	600	1000	1300	1600	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1.Աղբահանության կազմակերպման գործում բնակիչների համար դասընթացների կազմակերպում:</p> <p>1.2.Համայնքի տարածքում աղբահարթակների և աղբամանների տեղադրում</p> <p>1.3 Աղբատար մեքենայի ձեռք բերում</p> <p>1,4 Բնակիչներից աղբահանության վճարի գանձում</p>						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 2.2մլն դրամ Կապիտալ ծախսեր 40մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝50մլն.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Ֆինանսական միջոցներ տրամադրող կազմակերպության առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	<p>1.Կենտոնացված աղբավայրի չլինելու խնդիրը</p> <p>2.Բնակիչների ոչ շահագրգիռ մոտեցումը</p>						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն ,համայնք,						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2018թ						

<p>Ծրագրի համառոտ նկարագրություն</p>	<p>Նախատեսվում է Նորաշենի համայնքի տարածքում կառուցել 20-ից 25 աղբահարթակներ, որոնցում տեղադրվել աղբամաններ, ձեռք բերվի աղբատար մեքենա , շաբաթական ,կամ երկու շաբաթը մեկ անգամ աղբամանների պարունակության տեղափոխում աղբատար մեքենայի միջոցով: Շաբաթօրյակների միջոցով համայնքի տարածքի սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում:Հսկողության իրականացում շրջակա միջավայրը աղտոտումից պահպանելու համար:</p>
--------------------------------------	---

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**« ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակավայրի կառուցապատումը և բարեկարգումը					
Ծրագրի անմիջական նպատակ	Ունենալ լուսավոր և գեղեցիկ համայնք					
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Փողոցային լուսավորության կետերի ավելացում	0	10	20	25	30	40
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Լուսավորման կետերի ավելացում					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Լուսամփոփների, հաղորդալարերի և հենասյուներ ձեռք բերում/ հատ/	0	10	20	25	30	40
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 լուսամփոփների ձեռք բերում 1.2 հաղորդալարերի ձեռք բերում 1.3 հենասյուների ձեռք բերում 1.4 փողոցային լուսամփոփների տեղադրում					
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 200հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 1,0մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝1,2մլն.դրամ					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Ֆինանսական միջոցների առկայություն 2,Աշխատանքների կատարման պատրաստակամություն 3,Հենասյուների որոշակի քանակի առկայություն					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ռիսկեր չկան					
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք,					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2018թ					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի իրականացման արդյունքում Նորաշենի համայնքում նախատեսվում է բոլոր փողոցների լուսավորության ապահովում և ունենալ լուսավորված ու գեղեցիկ համայնք :					



**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**« ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՆՈՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղատնտեսության զարգացման խթանում						
Ծրագրի անմիջական նպատակ	Գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացում						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	Գյուղատնտեսությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունների եկամուտների աճ%-ով	2016	2017	2018	2019	2020	2021
	0	30	45	70	80	80	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բնակիչների գիտելիքների ավելացում գյուղատնտեսության բնագավառում						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Գյուղատնտեսության բնագավառում շահագրգիռ տնտեսությունների աճ%-ներով	0	30	45	70	80	80
	2. Բարձր արտադրողական և ժամանակակից գյուղ. տեխնիկայի ունենալը						
<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
Բերքի անկորուստ հավաքման աճ%-ով	0	20	30	40	60	80	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1դաընթացների կազմակերպում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Ֆինանսական միջոցների ձեռք բերում 2.2Բարձր արտադրողական մեկ խոտինձիչ կոմբայնի և մամլիչ-բարդոձիչի ձեռք բերում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1.0մլնդրամ Կապիտալ ծախսեր՝ 25մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝25.5մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Ֆինանսական միջոցներ տրամադրող դոնոր կազմակերպության առկայություն 2.Համայնքում կոոպերատիվի առկայություն 3.մշակվող վարելահողերի առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Դոնոր կազմակերպության կողմից չնախատեսված իրավիճակ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2018թ						

<p>Ծրագրի համառոտ նկարագրություն</p>	<p>Նախատեսվում է կոոպերատիվային շարժման դերի բարձրացում, ժամանակակից բարձր արտադրողական մեկ խոտինձիչ կոմբայնի և մամլիչ-բարդոձիչի ձեռք բերում,որի շնորհիվ բերքի կորուստը կկրճատվի և բնակչության եկամուտները կավելանան 20% և ավելի::</p>
--------------------------------------	--

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**« ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՆՈՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղատնտեսության զարգացման խթանում						
Ծրագրի անմիջական նպատակ	Գյուղատնտեսությունից եկամուտների ստացում						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատնտեսությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունների եկամուտների աճ %-ով	0	30	45	70	80	80	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բնակիչների գիտելիքների ավելացում գյուղատնտեսության բնագավառում						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Գյուղատնտեսության բնագավառում շահագրգիռ տնտեսությունների աճ%-ներով	0	30	45	70	80	80
	2. Բարեկարգ և հասանելի արոտներ ունենալը						
<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
Արոտների տարածքների ավելացում %-ով	0	20	30	40	50	60	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1 դասընթացներ անցկացում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1.Ֆինանսական միջոցների ձեռք բերում:</p> <p>2.2.Արոտներ տանող ճանապահների կառուցում</p> <p>2.3 արոտներում մակադատելների կառուցում</p> <p>2.4 արոտներում ծածկոցների կառուցում</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 1.8մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 12 մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 15 մլն դրամ.</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	<p>1.Ֆինանս տրամադրող դոնոր կազմակերպության առկայություն ԿԱՐԻՏԱՍ</p> <p>2,Արոտների համար նախատեսված անհամեմատ մեծ հողատարածքի առկայություն</p>						
Ծրագրի հիմնական ռիսկերը	<p>1.բնակչության գիտակցական մոտեցում</p> <p>2. Չնախատեսված դեպքեր դոնոր կազմակերպության հետ կապված</p>						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2018թ						

<p>Ծրագրի համառոտ նկարագրություն</p>	<p>Նախատեսվում է կոոպերատիվային շարժման դերի բարձրացում: Արոտների ճանապարհների բարելավում, արոտատեղերում կացարանների և մակաղատեղերի կառուցում:</p>
--------------------------------------	--



**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**« ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՆՈՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղատնտեսության զարգացման խթանում						
Ծրագրի անմիջական նպատակ	Գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացում						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատնտեսությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունների եկամուտների աճ	0	30	45	70	80	80	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բնակիչների գիտելիքների ավելացում գյուղատնտեսության բնագավառում						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Գյուղատնտեսության բնագավառում շահագրգիռ տնտեսությունների աճ%-ներով	0	10	20	30	40	50
	2. Բարեկարգ ոռոգման ցանց ունենալը						
<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
Ոռոգման ցանցի կառուցում մետր	0	200	1000	2000	2000	2000	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 դասընթացների կազմակերպում 2. –րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.խողովակների ձեռք բերում 2.2.Ֆինանսական միջոցների ձեռք բերում:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 9 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝13 մլն դրամ.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1. դոնոր կազմակերպության կողմից տրամադրվող գումարը 2, Ոռոգման ջրի անհրաժեշտություն տվյալ տարածքի համար						
Ծրագրի հիմնական ռիսկերը	1.բնակչության ոչ գիտակցական մոտեցումը 2.չնախատեսված դեպքեր դոնոր կազմակերպության հետ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2021թ						

<p>Ծրագրի համառոտ նկարագրություն</p>	<p>Նախատեսվում է կողպերատիվային շարժման դերի բարձրացում: 60հա հողատարածք ոռոգման ջրով անընդհատ մատակարարման համար ոռոգման 2000մետր ջրագծի կառուցում:</p>
--------------------------------------	--

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**« ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՊԻՏԱԼ ՆՈՐՈԳՈՒՄ »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքապետարանի շենքի բարվոք վիճակ ունենալ						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Վերանորոգված սենյակներ, դահլիճի առկայ.	0	4	11			
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Համայնքապետարանի նորոգման նախագիծ ունենալը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	ձեռք բերված Նախագիծ	1	0	0	0	0	0
	2. Նորոգված սենյակներ և դահլիճ ունենալը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Կապիտալ վերանորոգված շենք	0	4	11				
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 նախագծի պատվիրում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 շիննյութերի ձեռք բերում 2.1 շենքի կապիտալ վերանորոգում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 2.0 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 100.0 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 110.0մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Ֆինանս տրամադրող դոնոր կազմակերպության առկայություն 2,Նախագծի առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ռիսկեր չկան						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2018թ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է համայնքապետարանի շենքի կապիտալ վերանորոգում:						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**« ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում						
Ծրագրի անմիջական նպատակ	Մշակույթի տան շենքում բարվոք սենյակներ և խաղասենյակներ, դահլիճ ունենալ						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	Վերանորոգված սենյակների և դահլիճի առկայու	2016	2017	2018	2019	2020	2021
	0	7	7				
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգման նախագիծ ունենալը						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	ձեռք բերված Նախագիծ	2016	2017	2018	2019	2020	2021
	1	7	7				
	1. Վերանորոգված խաղասենյակներ և աշխատանքային սենյակներ						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
Սենյակների և դահլիճի վերանորոգում	2016	2017	2018	2019	2020	2021	
0	3	0	0	0	0	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 նախագծի պատվիրում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 անհրաժեշտ նյութերի ձեռք բերում 2.2 սենյակների վերանորոգում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1.5մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 70.0 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 80.0մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Դոնոր կազմակերպության առկայություն 2,Նախագծի առկայությունը						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ռիսկեր չկան						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2018թ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է համայնքային սեփականության մշակույթի շենքում սենյակների, խաղասենյակների և դահլիճի վերանորոգում:						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**« ՆԵՐՎԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքի պահպանություն						
Ծրագրի անմիջական նպատակ	Բարեկարգ ճանապարհներ և վերանորոգված ջրհեռացման առուներ ունենալը						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Բարեկարգ ճանապարհի ավելացում քառ. մետր		300	500	600	1000	3000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգված ջրհեռացման առուներ ունենալը						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Վերանորոգված ջրհեռացման առուների ավելացում գմ		1000	2000	4000	5500	7800
	2. Բարեկարգ ճանապարհ ունենալը						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Շեքենապատ ճանապարհների ավելացում քառ.մետր	0	2000	2000	2000	2000	2000	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 նախագծի պատվիրում 1.2 ֆինանսական միջոցների հայթայթում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 անհրաժեշտ նյութերի ձեռք բերում 2.2 ճանապարհների շեքենապատում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 2.0մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 2.3մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 5.0մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1. ֆինանսական միջոցների առկայություն 2. շեքենի առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Անձրևներ , սելավներ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2021թ						